լու համար Սանահին կայարանը և Ղարաքիլիսէ մէկ-մէկ յանձնախմբեր պիտի ուղարկեն և հայկական կառավարութիւնը վերոյիշեալ յանձնախմբերի անձեռնմխելիութիւնը և Ալեքսանդրապոլի շրջանում նրանց արևելեան ճակատի հրամանատարութեան հետ կանոնաւորապէս և ապահովապէս կապ ունենալը պիտի ապահովի:

Չորրորդ՝ մինչև զինադադարի 3րդ օրը, երեկոյեան երկու կողմի պատուիրակները հաշտութեան բանակցութիւնները սկսելու համար Ալեքսանդրապոլ պիտի գտնեն և այս ժամանակի ընթացքում, եթէ առաջին և երկրորդ պայմանների բովանդակութիւնը իրագործուած է, իսկոյն հաշտութեան բանակցութիւնները պիտի սկսեն:

Հինգերորդ՝ զինադադարի ժամանակի ընթացքում մեր զօրամասերը Ալեքսանդրապոլի շրջանում, առաջին պայմանում յիշուած Արփաչայ ընթացք Նալբանդ կայարան Վարանցովկա գծից արևելեան կողմը և միւս շրջաններում իրենց գտնուած գծից առաջ չպիտի անցնեն:

Վեցերորդ՝ զինադադարի կնքումից անմիջապէս յետոյ երկու կողմից թշնամական գործողութիւններին վերջ դրուի:

Սոյն զինադադարի պայմանները Ալեքսանդրապոլի շրջանում գտնուող հայկական առաջաւոր մասերին յանձնելու ժամից գործադրութեան մէջ են մտնում և պայմանաժամը, ի վերջոյ, եթէ կարիք զգացուի, երկարաձգելու պայմանով՝ եօթ օր է: № 2378, իսկականի հետ ճիշտ է:

Քեազիմ Կարաբեքիր

Ուրեմն, զինադադարի առաջին պայմանները մեր կողմից ընդունելուց և իրագործելուց յետոյ հակառակորդն առաջարկում է բոլորովին նոր պայմաններ, այս անգամ աւելի խիստ. ընդունել դրանց՝ նշանակում է Հայաստանի հողի կէսից աւելին զիջել թշնամուն, բանակը զինաթափ անել, ի Հարկէ, առանց երաշխիք ունենալու, որ մի քանի ժամ յետոյ նոր առաջարկներ չեն արուի:

Կառավարութիւնը որոշեց մերժել նոր առաջարկները՝ պնդելով զինադադարի նախկին պայմանների վրա: Նոյեմբ. 10-ին հետևեալ գրութիւնն ուղարկեց Անդորա.

10 Նոյեմբ. 1920 թ.

Նկատի ունենալով ձեր 2 նոյեմբ. գրութեան խաղաղասէր ոգին՝ մեր հրամանատարութիւնն ընդունել է և ի կատար ածել ամսոյս 6-ի ձեր առաջարկած զինադադարի պայմանները: Համաձայն ձեր այդ նամակի և 8 նոյեմբ. ձեր նոտայի բովանդակութեան, որով դուք առաջարկում էք խաղաղութեան պայմաններ և որոնց մենք սկզբունքով համաձայն ենք, ինչպէս նաև ըստ ձեր կառավարութեան արած առաջարկի, մենք արդէն նշանակել ենք մեր պատուիրակութիւնը: Նա պատրաստ է Ալեքսանդրապոլ մեկնելու՝ մշակելու ձեր ներկայացուցիչների հետ պայմաններ և կնքելու խաղաղութիւն:

Նկատի ունենալով այդ սկզբունքային համաձայնութիւնը և այն, որ մենք պատրաստ ենք անցնել խաղաղութեան բանակցութիւններին, որ զինադադարի պայմանները առաջարկել էք դուք ամսոյս 6-ին ձեր 554 գրութեամբ, ինչպէս այնպիսի պայմաններ, որոնք տալիս են ձեզ բոլոր անհրաժեշտ երաշխիքներն ազատօրէն առաջ տանելու բանակցութիւնները կոնֆերանսի ընթացքում, իմ կառավարութիւնը գտնում է, որ իր անկեղծօրէն հետապնդ-